

**ՀԱՅԲԵՆԻՔԻ ԹԵՄԱՆ ՆՏՊԱՏՆՐԱԶՄՅԱՆ ԼԻՔԱՆԱՆԱՀԱՅ
ՊՈՆԶԻԱՏՈՒՄ**

Շ. Մ. ՄՈՒՂՆԵՅՅԱՆ

Վահան Տերյանը իրավացիորեն նշել է, որ հայ գրականության ամենաբնորոշ մի առանձնահատկությունը եղել և մնում է ազգային գոյության սեփականում։ Սա բացատրվում է գարեր շարունակ մեր ժողովրդի մղած գոյապայքարով։ Իսկ գրողին առաջին հերթին զբաղեցնում է հարազատ ժողովրդին ամենից շատ հուզող հարցը։ Հայրենիքի թեման ներշնչման ամենակենսատու աղբյուրն է։ Այդ զաղափարը կարմիր թելի նման անցնում է մեր գրականության միջով սկզբից մինչև մեր օրերը, գարձել է մի անբաժանելի հատկանիշ, դուրսավորել է մեր ինտելիգենցիայի միտքն ու երևակայությունը...¹։ Բացառություն չէ նաև լիբանանահայ ետպատերազմյան գրականությունը, որտեղ առաջնայինը շարունակում է մնալ հայրենիքի պատմական բախտի փրկիստփայտությունը, հայապահպանման թեման։

Լիբանանահայ ետպատերազմյան գրականության ամենաարժեքավոր գործերի հիմնական ատաղձը հայրենիքն է։ Այդ գաղափարն առաջագնի գրողների մտահոգությունների հիմքն է կազմում, նրանց մղում ստեղծագործական վերելքի, ծնունդ է տալիս գեղարվեստական արժեքների։ Սովետական հայրենիքը մշտնջենի երազային անորոշությունից հառնող փաստացի իրականություն էր արդեն նույնիսկ նրանց համար, ովքեր իրենց հրամցված մտացածին տեղեկությունների հիման վրա տասնամյակներ շարունակ կասկածով էին խորհել նրա գոյության մասին։ Ամենայն հայոց վերածնված ոստանը իրական ու շոշափելի դրսևորումներով իր զիրկն էր կանչում պանդուխտին, և պոռթկում էր վերջինիս դարերով ամբարված կարոտի ու սիրո երգը։

Հոգիս ամբողջ իմ սիրտիս մեջ, ու սիրտիս զարկն իմ բառերուս,
Բիբերուս մեջ կանթեղելով հազարներու հավատքն ու հույս,
Ես՝ անծանոթ այլ հարազատ որդիդ՝ բախտեն հալածական,
Քեզ կկանչեմ, քեզ կորոնեմ, մորմեն խլված մանկան նման...
Լսե՛, Երևա՛ն, խոսե՛, Երևա՛ն²։

1945 թ. գրված այս տողերը պարզորոշ արտացոլում են ոչ միայն Վահան Վահյանի դավանանքը, պատկերացում տալիս նրա ռեալիստական աշխարհըմբռնման, Սովետական Հայաստանի նկատմամբ ունեցած վերաբերմունքի, վերջինիս դերի բարձր գացողության մասին, այլև սփյուռքահայ առաջադիմ զանգվածների սրբազորված գացմունքների, նրանց վառ հույսերի ու երազների իրականացման գիտակցված ապացույցն են։ Սովետական Հայաստանը գործնականորեն հաստատեց այն ճշմարտությունը, որ ժողովրդի կյանքի

¹ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1961, էջ 251։

² Վահան Վահյան, Ոսկի կամուրջ, Երևան, 1958, էջ 45։

հարատևման միակ իրական ու զորեղ կռվանը գտնվում է Արաքսի ձախ ափին: Երեսնական թվականներին գաղթաշխարհում տիրող մղձավանջը ջլատում էր անհատի հոգեկան ուժերը, նրան նետում հուսաբեկ խարխափումների հորձանուտը, և բանաստեղծ Վահե Վահյանը ցավով հառաչում էր.

Արդ սպառած ու ճրղճիմ՝ կփոքրանա՞ս դուն քու մեջ...
Եվ անարցունք կարտասվես եսիդ վրա քարուքանդ:³

Քառասնական թվականների կեսերին արդեն «Տաղ առ Երևան» բանաստեղծության մեջ նա արձանագրում է հեղաշրջիչ այն իրողությունը, որը բեկում մտցրեց գաղթաշխարհի մարդու հոգեբանության մեջ: Հայրենիքն անտեսանելի երականերով հոգեկան կորով էր հաղորդում իր զավակներին, ոտքի կանգնեցնում նրանց, վերականգնում ջլատված ուժերը, ապաքինում պանդխտության բոլոր վերքերը.

Երդիկի տակ օտար ու ցուրտ ա՛լ կսպառի՛մ լույս հեալին,
Բայց չի հոգնիր հոգիս հյուծած՝ ամեն վայրկյան քեզ հուսարեն...
Իմ մա՛յր Երևան, արդա՛ր Երևան
.... Հանուր կոչանքի սեղա՛ն Երևան⁴:

1945 թ. հետո մեկը մյուսին հաջորդում են բերկրալի իրադարձությունները: Սովետական Հայաստանում ձեռնարկվում են Միջին Արևելքի հայության հետ կապերի ամրապնդման բազմաթիվ միջոցառումներ, որոնք երբեմն նույնիսկ անակնկալ էին նրանց համար: Ինչպես ամենուր, Լիբանանում ևս հակայատև խանդավառություն առաջացրեց հանրապետական ռադիոյի սփյուռքահայության համար տրվող հաղորդումների ծրագրի ստեղծումը: Ոգեվորությունն ու խինդն անափ էին: Համարյա բոլոր բանաստեղծներն ու արձակագիրները այդ տարիներին անդրադարձան մեծ իրադարձությանը, իրենց հիացմունքն ու խոր բավականությունն արտահայտելուց թացի, արժեքավորեցին տվյալ իրողության դերը, բացահայտեցին ներգործության հսկայական ընդգրկումներն ու խորությունը.

Կորուստի խոր անդունդին չհասած երգը մղթին,
Ցույց տուր ինձի ճանապարհ քու ջահերովդ պայծառ,
Ու հոգիիս ծարավին դեմ կարկաչե՛ իբր աղբյուր,
Երևանի՛ ձայնասփյուռ:
... Ու մութիս լու՛յս ավետող եղիր սիրո՞ւ դուն համբույր...⁵:

Լիբանանահայ գրականության ավագն է Վահե Վահյանը⁶, իր բոլոր սերունդակիցների նման նա ևս զերծ չմնաց 30-ական թվականներին սփյուռքա-

³ Վ ա հ ե Վ ա հ յ ա ն, Արև-անձրև, Բելրութ, 1933, էջ 10:

⁴ Վ ա հ ե Վ ա հ յ ա ն, Ոսկի կամուրջ, էջ 45:

⁵ Նույն տեղում, էջ 9:

⁶ Վահե Վահյանը հեղինակ է նաև Բալզակին, Գորգոյին, Գորկուն, Լասին (Լուիզա Ասլանյան), Սեմային (Գեղամ Աթմաշյան) նվիրված մենագրությունների, բազմաթիվ գրախոսականների, նրա գրչին են պատկանում Վ. Ալֆրեդի, Պոլ Էլլուարի, Վ. Հյուգոյի մի շարք ստեղծագործությունների թարգմանությունները:

ալ, դրականության մեջ իշխող անկումային տրամադրություններից, մանա-
կանդ որ դրա համար պարարտ հող լինելուց բացի, ինչպես ինքն է նշում,
առատ նյութ էր տալիս մեծ տրամության ժառանգությանը սնված և արյան
ու կրակի ճամփաներով ոտաբոբիկ անցած իր կյանքը: Վահե Վահյանը նոր
«ըջանի» հտպատերազմյան գրականության նախակարապետն է: 1946 թ. Բեյ-
ութում լույս տեսած նրա «Ոսկի կամուրջ» ժողովածուն, իր իսկ բնորոշ-
ումը, մի ոսկեղեն կամար է՝ նետված անցյալի մռայլ, մղձավանջային գի-
երվա խորքից դեպի ծիածանագեղ ամպերից վեր բացվել խոստացող «Մեծ
օրվա մր փառքը»: Ժողովածուի «Ընծայականում» նա գրում է.

Ինչ որ առի կյանքի հունեն՝ հիմա կյանքին կուտամ կրկին
Ես համայնքին հետ բաթախուն, այլ սոսկ հյուլեն՝ անոր հետին...⁷:

Այո՛, Մենությունից բանաստեղծը կյանք է վերադարձել, կապվել ժո-
ղովրդի հետ: Մեկը մյուսին հաջորդած խոշոր ու կարևոր իրադարձություն-
ները դրական փոփոխություններ են մտցրել նրա կենսափորձի մեջ, հարըս-
տացրել այն: Ժողովրդի մեջ արթնացած ազգային ինքնագիտակցությունը խոր
սրմատներ է գցել հոգու և մտքի մեջ, նրա ստեղծագործությանը հաղորդել
նոր թափ ու ավյուն: Հեղինակը որոշակի շրջադարձով իր հոգեկան բոլոր կա-
պերը խզում է անցյալի հետ, հաստատուն կանգնում իր կոչման բարձրու-
թյան վրա, դառնում ժողովրդի հույզերի թարգմանը: Այս կտրուկ անցումը.
որը նրա ստեղծագործության նոր շրջանի սկիզբն է, արտահայտված է «Հրա-
մեջտ» բանաստեղծության մեջ.

Ով երկյուղենք՝ իմ երեկիս, երգերս անհույս ու տրամալար,
Մահախուճապ իմ ցերեկներս ու գիշերներս արհավրալից,
Ով դասալիք իմ նահանջներս, ընկրկումներս ամոթահար,
Հոգեհանգիստ ձեր բոլորին՝ շիրիմին մեջ իմ անցյալիս⁸:

Զնայած, ըստ էության, փոքր-ինչ խիստ է ասված անցած շրջանի մասին,
և թվում է թե բանաստեղծը ակ խաչ է դնում իր նախորդ ստեղծագործություն-
ների վրա, բայց, այդուամենայնիվ, ուրախալին այն է, որ որպես ճշմարիտ
շերթող, նա իր հարազատ զավակներն է համարում դրանք և խոր ցավով ու
անվերադարձ համոզմունքով է բաժանվում: Ժողովածուն փաստում է, որ
գրողի ստեղծագործությունն անշեղ վերելք է ապրում նաև ներքին կառուց-
վածքով: Հաղթահարելով «Արև-անձրևի» վերացականությունը, միստիցիզմը,
խորհրդավորությունը, թերասածությունն ու անորոշությունը, նա հասնում է
կոնկրետության, ձգտում բանաստեղծական խոսքի իմաստային ճշտության:
Բանաստեղծն արդեն պայքարող մարտիկ է («հոգիս՝ զինվոր, իբր արի...»)
և կոչ է անում՝ «—Կեի՛վ անդադրում՝ մինչև հաղթանակ»:

Վահե Վահյանի ստեղծագործությանը նոր թափ ու եռանդ հաղորդեց
1946 թ. հայրենադարձ քարավանի հետ հայրենիք կատարած այցելությունը:
Որսնակցելով Հայաստանի սովետական գրողների երկրորդ համագումարին,

⁷ Վահե Վահյան, Ոսկի կամուրջ, էջ 37:

⁸ Նույն տեղում, էջ 52:

նա մոտիկից շփվեց գրչակիցների, բնաշխարհիկ ժողովրդի հետ: Շրջազայեց երկրում, դիտեց տեսարժան վայրերն ու հուշարձանները և վառ ու անմոռաց տպավորություններով վերադարձավ Բեյրութ, Օրավուր ծաղկող հայրենիք՝ բանաստեղծին տվեց հոգեկան արարչագործ այն ուժը, որի շնորհիվ նա կարողացավ շրջադարձ կատարել՝ դեպի առաջադեմ գաղափարների համար մղվող հետևողական սյայքարի ուղին: Նա ոչ միայն վերջնականապես ազատագրվեց ստեղծագործության առողջ զարգացմանը խոչընդոտող կապանքներից, այլև մի ներքին մղումով գնաց դեպի իրական մարդը.

Նոր հավատքի մ' հուրովն այրած, լի՝ տենչերով աստղային,
Քաղն, քաղնք, հույսի ընկեր, դեպի կատարն այն ճամփին,
Որ կհանգի լույսի, ջանքի նորանըված ոստանին,
Ու պիտի մեր ծարավին դեմ բանա ակե՛ր պաղպաղուն⁹,

Նա կոչ է անում ապավինել վերածնված հայրենիքին: Եվ եթե իր երգի շունչը ընթերցողին ոգևորի «Ու նոր բոցով բռնկի», գա բանաստեղծը կդիտի որպես օրինաչափ երևույթ, քանի որ այն կյանքի ռեալ ուժերի մղումն է, արեւի մղումը.

Երբ Արագածն ըրած փարոս, ու Զանգուն՝ գանգն իր կոչին,
Տուն կկանչե հայ նժդեհ՝ երկիրը մեր վերածին...¹⁰,

Սովետական Հայաստան կատարած ուղևորությունից ստացած տպավորությունների հիման վրա Վահե Վահյանը գրեց հայրենական հուշերի և ճամփորդական նոթերի իր գիրքը՝ «Հարալեզներուն հաշտությունը»¹¹, ուր ճոխ լեզվով նկարագրում է Երևանում ունեցած իր հանդիպումները փնչպես սփյուռքահայ, այնպես էլ սովետական գրողների հետ, մեծ ոգևորությամբ պատմում Սովետական Հայաստանի աշխատավորության ձեռք բերած հաջողությունների, նրանց աշխատանքային խանդավառության ու առօրյայի մասին: Բանաստեղծի մոտ խորապես արմատավորվում է ինքնաճանաչման գաղափարը: Նա վերադառնում է՝ ի լուր համայն սփյուռքի հայության հայտարարելու.

«Զկա հայրենիք՝ առանց հողի, և ազգ՝ առանց հայրենիքի»¹²,

Հայրենիքի թեման զարգացման ուրույն աստիճանի հասավ Վահե Վահյանի հիմնադրած «Անի» ամսագրի էջերում: Պարբերականի բոլոր 65 համարները տրամադրված են սփյուռքում (զլխավորապես Լիբանանում) ապրող և ստեղծագործող տարեց ու երիտասարդ գրողների գործերին: Ամսագիրը պարբերաբար անդրադառնում է նաև նոր հրատարակություններին, ամփոփում ձևով բերած նվաճումները, նշում դրականության առաջիկա խնդիրները, բնագատում գրական թույլ ու անարժեք գործերը:

⁹ Նույն տեղում, էջ 40:

¹⁰ Նույն տեղում, էջ 129:

¹¹ Վահե Վահյան, Հարալեզներուն հաշտությունը, Բեյրութ, 1953: Գրքից առանձին հատվածներ տպագրված են 1958 թ. Երևանում հրատարակված «Ոսկի կամուրջ» ժողովածուում:

¹² Վահե Վահյան, Հարալեզներուն հաշտությունը, էջ 487:

կոստանտնուպոլսյան շրջանում, երբ գրեթե լուել էր Պրանսահայ գաղութը, երբ Միացյալ Նահանգներում ոչ մի երիտասարդ չէր ձգտում հայերեն դրելու, երբ հայ գրականությունից հեռացել էին Շահան Շահնուրն ու «Լույս լվարթ» յուրակալ բանաստեղծությունների ժողովածուի հեղինակ Զավեն Սյուրմեյանը, սփյուռքահայ մշակութային դուալիզմը օջախներ դարձան փոքր նստատեղիք ունեցող սյամաններում պարզացող մերձավոր-արևելյան հայ շաղկապները: Գրական սերունդը համախմբվեց Վահե Վահյանի «Անի» Կառույցի շուրջը: Այն դարձավ այդ սերնդի ղեկավարական հայացքների ավագույն արտահայտիչը սփյուռքում: Ամսագրի էջերում Վահե Վահյանը հակայական հրապարակախոսական և գրականադիտական դործունեություն ակունքում նա աշխատում էր երիտասարդ սերունդին հոգեկան անքակտելի կույրերով հանդուցել հայության միակ իրական հայրենիքի հետ: Ամսագրի հենց առաջին համարում նա գրում է. «1920-ին նահատակ հայ ժողովուրդի կյանքին մեջ պատահեցավ զեղբոր մը, ուր Երջանկաբաշտ յանդավաճներու տարերային թերթի բռնեցին մեր պատմության սալը թավալող ցուլերուն եղջյուրներեն. զբեցին այդ սալին անիվները, ու նդովքը վերածեցին օրհնության»:

«Մեր երկրին մեջ, — շարունակում է նա, — մեծ ու բարի լուսաբացն է հիմա: Իմ տներ ճառագայթները ոսկի են թափեր մեր լեռներու կողերն ի վար, և արծարծեր են ստեղծագործ հրայրքը՝ Հայրենիքի մեր հարագատներու հոգիին մեջ»¹⁵:

Հաշվի առնելով այս մեծ իրողությունը, նա երիտասարդներին կոչ էլ անում հույատար ժառանգորդի գուրգուրանքով վերաբերվել անցյալին, բայց միաժամանակ և առողջին հերթին գրական ստեղծագործության մեջ բնորոշելու ներկայի և սկզբունքային նախընտրյալ վաղվան: Գրական այս դավանանքն էլ դարձավ «Անիի» շուրջը համախմբված դրողների ստեղծագործության հիմնական ուղևորը: Գլխավորապես երիտասարդ բանաստեղծներ ու աշակերտներ էին ուղիատակցում ամսագրին, որի էջերում կարելի է հանդիպել առողջ դադափարաբնույթի մեծ տողերով և զեղարվեստական որոշակի արժեք ներկայացնող բանաստեղծությունների, հաջողված պատմվածքների, իհարկե, էան նաև ամսագրային կարճատև կյանք ունեցող գործեր:

«Անիի» էջերում տպագրված շափածոյի հիմնական մոտիվը հայրենիքն է: Զափածոյի բնորոշ հատկանիշներից մեկը, որ բխում է ժանրային առանձնահատկությունից, այն է, որ բանաստեղծը հնարավորություն ունի անմիջապես արձագանքելու այս կամ այն կարևոր իրադարձությանը, գեղարվեստական խոսքով արտացոլելու մարդկանց ասորումներն ու խոհերը: Օտար երկնաշամարի տակ ծնված ու հասակ առած երիտասարդ սերունդն իր հայրենիքի մասին գիտելիքներ է ձեռք բերում ավագների հուշերից: Մոռցնելը պատմում էն իրենց ուստանի, նրա մարդկանց, բնության հրաշալիքների մասին, մեծ արհավիրքի մասին, որ քարոքանք արեց ու կրակի ճարակ դարձրեց ողջ Երևանյան Հայաստանը: Ահա թե ինչու ամսագրում հանդիպում են գործեր, որոնցում հայրենիքը երգվում է. որպես անցյալի տխուր հուշ, վերացական, լայգ և արտամոտ մի դադափար: Սակայն առաջադեմ երիտասարդությունը, որն ավելի ռեալ էր նայում կյանքին, պարզորոշ գիտակցում վերածնված ու նորոգ Սովետական Հայաստանի դոլություն փաստը, նրա հետ էր կապում

¹⁵ «Անի», Բեյրութ, 1946, № 1, էջ 1—2:

իր ամենապայծառ և քաղաքական, հույսով Գրական տալիս սերնդի լավատույնը ներկայացուցիչն է Գառնիկ Աղզարյանը, որի բանաստեղծություններից մեկում կարգում ենք.

Ու տարօրեն գեղեցիկ, կենսաբույր օր մը գարնան,
Արևաշող ու անմահ օր մ'աննման հրազի,
Պանգոխտի ցուպը ձևաքիս՝ կրկին քեզի պիտի դամ,
Կրկին քեզի պիտի գամ, հո՛ղ իմ, հո՛գ իմ հայրենի:

Հայրենագուրկ սերունդին ամբողջ կարոտը սիրտիս,
Ծա՛ հոգնաբեկ ու անոթ, տառապահար պարմանի,
Պիտի քեզի համար տամ վերջին ավյունը կյանքիս,
Վերջին կաթիլն արյունիս, օ՛ հրկիր իմ հայրենի¹⁴:

Երիտասարդ բանաստեղծները գովաբանում էին հայրենի երկիրը, արժեքավորում նրա դերը սփյուռքահայության ներկա և ապագա կյանքում, նրանք բաշտակցում էին, որ հայրենիքն է սփյուռքահայության միակ ապավենը և հայրենադարձությունը դիտում էին որպես մեր պատմության մեջ հավասարը շունեցող խոշոր երևույթ, որը նոր դարագլուխ է սկզբնավորում ազգային կյանքում: Այդ մեծ երևույթի վեհությունն է արտացոլված հետևյալ տողերում.

Կալեկոծին երկու ծովեր, երկու անհո՛ւն՝ դեմ հանդիման...
Մեկն ափերուն կուտա ընծան սպասումի՛ն իր շափուղան,
Մյուսն՝ հույսի լայն թևերով հորիզոննե՛ր կնվաճե,
Երբ հրակեղ մեր հրազին ու կարոտին բոցեն ծնած՝
Կհայտնվի առաջին նա՛վն հայրենադարձ¹⁵:

«... Ազգ մ'է ամբողջ առաջին նավն հայրենադարձ», — եզրակացնում է բանաստեղծ Վահե Վահյանը:

Հայրենիքին նվիրված իր առաջին գործերը «Անիում» տպագրեց նաև երիտասարդ բանաստեղծ Անդրանիկ Թերզյանը¹⁶, նա մեծ ոգեշնչումով է երգում «Համայնական ափերի» հայրենիքը, որն այնքան մոտ ու հարազատ է իրեն և գտնում է, որ այնտե՛ղ ապրել, նշանակում է նոր սկսել կյանքը՝ «Ծա կմտնեմ քո դռնից ներս — կարծես դռնից այս մեծ դարու...»: Բանաստեղծը հայրենիք ունի, նա վստահ է իր ապագային և ահա, հայացք նետած վաղվա պայծառ հորիզոնին, գրում է.

Սերմերդ հանձնի՛ր դու հողին,
Մատներդ երբեք չդողան.
Հարազատ հո՛ղն է քո ուղին,
Զի դավի հողը նաիրյան¹⁷:

¹⁴ Նույն տեղում, № 6, էջ 314:

¹⁵ Նույն տեղում, № 3, էջ 129:

¹⁶ Հայրենադարձության առաջին քառյակներով Անդրանիկ Թերզյանը մեկնեց Հայաստան:

¹⁷ «Անի», 1947, № 13, էջ 14:

Ջերմ ու անձնուրաց հայրենասիրությամբ է տոգորված նաև Զարեհ Մելքոնյանի այդ շրջանի ստեղծագործությունը։ Բանաստեղծի հոգում լույսի ճառագում է առաջացրել հայրենադարձությունը, նրան հաղորդել նոր լիցք, նոր սլացք ու կորով։ Բանաստեղծը լիբանանահայության անհուն երախտագիտությունն է հայտնում արար ժողովրդին, ում հետ համատեղ աշխատեց, ապրեց, պայքարեց և ոտքի կանգնեց գաղթահայությունը։

Զարեհ Մելքոնյանի այս մոտիվներով ստեղծված բանաստեղծական տողերը ուղեկցվում են հայրենիքին, նրա լուսև ալսօրվան ու վաղվան, նրա մշտահոյով փառքին ձոնված տողերով։ Նա հայրենիքը փառաբանելու համար ընտրում է ամենասլայծառ որակումները։ «Երկիր իմ լուսափառ..., երկիր իմ լուսեղեն..., երկիր իմ կենսատու..., երկիր իմ նոր..., երկիր իմ ոսկերույ...»։ Հեղինակի վերարերմունքը որոշակի է, անսքող.

Ո՛վ Հայաստան՝
Սովետական, ոսկեդրվագ, շոշափելի՝
Իմ հայրենիք¹⁸

դոշում է բանաստեղծը՝ երջանկության հզոր լիցքից ուռնացած կրծքով։ Ահա հայրենիքի գիրկն են դառնում տարագիր գավակները։ Նրանք հասակ են առել օտար ափերում, հետևաբար նրանց մեջ ինչ-որ օտարածին բան կա, թող ներվի։ Հայրենիքն իր զորեղ ափով պանդուխտ հայերի վրայից կարբի օտարության ծանր փոշին, ինչպես նրանց ձակատներից առհավետ ջնջեց պանդխտության խարանդ։ Բանաստեղծն անզուսպ մղումով կապվում է կյանքին միաձուլվում նրա բաբախուն ութմին։ Արդեն անցյալ են դարձել մենության տենչը, մշուշոտ անորոշությունը, երբ խորհում է, թե՝

.... Ա՛հ, լավ է աղոթել մենությամբ,
Երբ դուրսը, ստվերեն
Գիշերներ կծնին¹⁹։

Հավերժության գիրկն են անցել այն ժամանակները, երբ բանաստեղծի սրտի արցունքները բախում են բոլոր դռները, բախում են հույսով, սակայն խուլ են դրանք ու չեն բացվում։ Նրա լացը չլսեցին օտար մարդիկ, եթե լսեցին էլ՝ ծաղրեցին, իսկ ինքը տառապեց իր եղբոր ու բոլորի վշտից։ Այժմ արդեն հուժկու շրջադարձ է կատարվել.

Ո՛վ նոր տարի,
Տարրե՛ր ես դուն անցյալի նոր տարիներես,
Որովհետև տարբեր եմ ե՛ս։
Փառք առհավետ,
Աշխարհն ու գիս փոխողներուն երանավետ²⁰։

... Իսկ աշխարհը փոխվել է լուսեղեն հայրենիքի՝ կանչով։

¹⁸ Զարեհ Մելքոնյան. Ջրհեղեղեն հետո, Հալեպ. 1947, էջ 12։

¹⁹ Զարեհ Մելքոնյան, ես և մարդիկ, Հալեպ. 1943, էջ 22։

²⁰ Զարեհ Մելքոնյան. Ջրհեղեղեն հետո, էջ 33։

«Հայաստանին» բանաստեղծության մեջ հեղինակը հասնում է չափազանց բնորոշ հոգեբանական ընդհանրացման, բանի որ պանդուխտի մայրն է հայրենիքը, որը հոգու աչքերով, անկասկած, տեսնում է լույսի պես հատնող, տառապող որդու անդուսպ մղումը դեպի հարազատ ափը։ Այս գիտակցությունը նա անվարան հայրենիք է մեկնում, առանց մտածելու, թե վերջինս ինչ կարծիքի է իր մասին։

Քեզ սիրեցի սիրտով, միտքով ու ափերով զաղթականի....,
հրազենեռու մեջ՝ իրական, ու կյանքիս մեջ եղար երազ....²¹։

«Խորհրդային հայրենիքիս» բանաստեղծությունը ես սկզբից մինչև վերջ տողորված է պարզ ու մտևմիկ անկեղծությամբ։ Դրողի համար ամենամտերիմը, մոտիկն ու հարազատը հայրենիքն է։

Օտարներու նայվածքին դեմ՝ դուն կանգնեցար փուշի մը պես,
Սակայն իմ մեջ որոտացիր, աշխարհ ցնցող ուժի մը պես²²։

Սովետական Հայաստանի թեման նոր որակ է ստանում Մելքոնյանի «Ջրհեղեղեն հետ» ժողովածուում, որտեղ ամփոփված են նաև «Անիում» տպագրված լավագույն բերթվածները։ Հատկանշական է, որ այստեղ Զարեհ Մելքոնյանը մի քայլ առաջ է անցնում սերնդակիցներից և բանաստեղծի իր հեռատեսությանն աղավինելով, պայծառ երևակայությամբ պատկերում է զալիքը։ «Հայ տղոց» բանաստեղծությունը դրա վտո վկայությունն է։

Հավերժին հետ ճամփա ելած, միայն այսօր մեզի հասնող,
Տղա՛ք, այս ինչ սարսուռ է նոր, այս ինչ պոռթկում ճաճանջուցող—
Ամեն՛ բազուկ կոհակ մ'է նոր, ամեն խոյանք՝ պոռթկում ու տենդ,
Ամեն՛ սիրտի, ամեն՛ ափեն հորդող ծովի՛ն համար այս խենթ։

Տղա՛ք, բերե՛ք բազուկը ձեր, բերեք հոգի՛ն արմենական,
Ու խառնեցե՛ք անպարտելի փոթորիկին այս սրբազան.
Ծիր-կաթինի ճամփով շաշող՝ նետին նման Հայկ նախա՛հոր,
Թող ըլլան շեշտ ու անպարտիակ, ձեր ոստումները ամեն օր²³։

Նույնպես շրջանում լիբանանահայ դրականության առաջատար ներկայացուցիչները իրենց ստեղծագործություններում ոչ միայն գեղարվեստական որոշակի բարձունքի ու կատարելության հասցրին հայրենիքի թեման, այլև ինչպես որոշ ծրագրային գործերում, այնպես էլ մամուլի էջերում պայքար ծավալեցին վատառողջ զաղափարախոսության ու մտայնությունների դեմ։

Սփյուռքի հայ զանգվածներին, մասնավորապես երիտասարդությանը, կոչ անելով հայացքը դարձնել դեպի Սովետական Հայաստանը, Վահե Վահյանը «Անի» ամսագրի էջերում հրատարակած իր բաղմաթիվ հրապարակախո-

²¹ Նույն տեղում, էջ 39։

²² Նույն տեղում։

²³ Նույն տեղում, էջ 24։

սական, գրաքննադատական հոգվածներում շեշտում էր այս գործում գրականության մեծ գերրը: Մեր ժողովրդի պատմական կյանքի հանգրվանային բոլոր էտապներն ապացուցում են, որ որպես ազգային ինքնություն միավորի՝ այդ դանդաղածների դոյությունը, հայ գրականության ու մշակույթի զարգացումը հնարավոր է միայն հայրենիքի հետ ունեցած սերտ կապով: «Հայրենիքն այն ումն է,— նշում է Վահե Վահյանը,— որ նոր ներշնչումներ կուտա՛ն: Սփյուռնին, կիմաստավորե անոր ամեն մեկ շարժումը, կուտա պայծառ լեռանկար անոր տեսիլքին»²⁴: Այս փնտրիտ տեսակետը պաշտպանում են լադիստիի բոլոր առաջատար դրական դեմքերը: «Խորհրդային իմ Հայաստան...»,— գրում է Գառնիկ Ազդարյանը,— ...Կաս գուն— ու հեռավոր այս ավերույն վրա անգամ մեր ձիգը իմաստ ունի, մեր գոյատևումը՝ նպատակ, մեր զոհարարումը՝ արդարացում»²⁵:

Այսպիսին է առաջադիմական գրողների ստեղծագործական դավանանքը, որը հարազատ երանգներով հարստացնում է լիբանանահայ պոեզիան, այն իրավամբ դարձնում առողջ կենսանյութով բարախուն մի ամբողջություն:

ТЕМА РОДИНЫ В ПОСЛЕВОЕННОЙ ЛИВАНСКО-АРМЯНСКОЙ ПОЭЗИИ

Ш. М. МУГНЕЦЯН

Р е з ю м е

Тема воспевания Родины стала доминирующей в послевоенной ливанско-армянской поэзии. Ее видный представитель Ваге Вагян раскрывает определяющую роль Советской Армении в жизни армян спюрка, рассматривая Родину как жизненную силу зарубежных армян.

Эту идею Ваге Вагян развил не только в своей поэзии, но и на страницах ливанско-армянской печати. Основанный им журнал «Апп» сплотил вокруг себя многих поэтов (Зарэ Мелконян, Гарник Аддарян и др.), которые в своем творчестве придерживались постулата Ваге Вагяна: «Нет Родины без земли и нации без Родины».

Представители послевоенной ливанско-армянской поэзии обогатили армянскую литературу новыми, ценными произведениями, посвященными Родине.

²⁴ «Էջեր գրականության և արվեստի», 1970, էջ 25:

²⁵ Նույն տեղում, էջ 39: